

ՆՅՈՒԹԵՐ ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԻՑ

Ե. Հ. ՇԱՀԻՑԱՆ

Նոր նախիջևանի հայկական գաղութի ժողովրդական ստեղծագործությանը բողոքական է ու հետաքրքիր Հանրաճանաչ «Արտջանի երգը», առնական «Կարճուկ Մառտինը», բաղմիրանգ «Լիճակը» և ուրիշ այլ երգեր նախնիների հիա Անիից անցել են Ղրիմ, իսկ Ղրիմից՝ Դոն, դարեր շարունակ հուղելով մարդկանց սրտերը, կենդանի վկա դառնալով հայրենադուրկ գաղթականների դիմադրության բարձր հաշակի մասին: Միայն խորր բանաստեղծական ոգին կարող է այսպես հակիրճ, բայց խոսուն գովել սերը:

Քունն Լիլի է, աշը աթիլ է,
Ցարը էգիլ է, տուրը գայնիլ է,
Ինչ կիլի քի յարին էրբա,

Ինչ կիլի քի քունին էրբա,
Քունն Լրբանը՝ մեմալ կուկա,
Ցարն Լրբանը՝ մեմալ շի կա:

Նույնքան հարուստ ու բաղմատեսակ են մանկական երգերը՝ իրենց արտակարգ ներգործուն ուժով: Նրանց մեջ հնչում է մեր մայրերի հոգեղմայլ, կենդանարար ձայնը, անբռնադրուս զվարթությունը: Ինչքան-ինչքան մայրեր իրենց դավանների հետ խոսել են անձամբ, անդադար, ամեն հնարավոր քնքուշ խոսքերով ու եղանակներով, իսկ նրանց քնած ժամանակ՝ օրորել ու երգել են լսած, դիտեցած մանկական երգերը՝ արտահայտելով իրենց անսպառ մայրական սերը:

Դոնի հայրի ժողովրդական ստեղծագործության նմուշները ամփոփված են Քերտուրե Պատկանյանի «Іахичеванский говор»-ը (1875), Գեորգ Տիգրանյանի «Առածը, ասացվածք և զրոյցը հայոց նոր նախիջևանի» (1892), Երվանդ Շահադիդի «Նոր նախիջևանը և նորնախիջևանցիք» (1902) և ուրիշ ժողովածուներում, բոլորն էլ զրառված XIX դարի երկրորդ կեսին ու XX դարի սկզբներին և կաղմում են հիշյալ դաղթօջախի հոգևոր գանձերի մի փոքր մասը միայն: Շատ երգեր, առածներ, ասացվածքներ, հեքիաթներ մատնվել են կորստի այն պատճառով, որ բանավոր զրականության գրառումը նոր նախիջևանի հայկական գաղութում կատարվել է մեծ ուշացումով, երբ Ղրիմից Դոն հայրի դաղթից անցել էր ավելի քան հարյուր տարի, և շատ երգեր ու ծեսեր մոռացվել էին:

Բանավոր զրականության տրոպիկանդման աննշան փորձեր կատարեցին դարասկզբին Նոր նախիջևանում հրատարակվող «Լույս», «Գաղութ», «Նոր կյանք» հանդեսները, սակայն վերականգնել կորցրածը արդեն անհնար էր, և պարբերական մամուլի ջանքերն անցան գրեթե ապարդյուն: Սովետական իշխանության առաջին տարիներին առժամանակ տեսադաշտից դուրս մնաց ժողովրդական բանահյուսությունը, իսկ հետագայում, երբ տեղի մտավորակա-

նության կարող մասը (Մ. Բոգզանյան, Մ. Չուբարյան, Խ. Փորքեջյան, Մ. Լյու-
լեջյան և ուրիշներ) ձեռնամուխ եղավ գործին, արդեն բավական ուշ էր:

Ստեղծված դրությունը անհետաձգելի խնդիր դրեց Ռոստովի շրջանային
թերթի խմբագրության առջև հենց սկզբից (1931) լուրջ ուշադրություն դարձնել
ժողովրդական բանահյուսությանը: Ի դեպ, «Ջարյա կոմունիզմա» թերթը
(նախկին «Կոմունարը») միակ հայկական պարբերականն է Ռոստովի մար-
զում, հետևապես և Դոնի հայերի ամբիոնը, հայ մշակույթի մասսայականաց-
նողը:

Ժողովրդական բանահյուսության առաջին նմուշները՝ մեծ մասամբ երգեր
«Ջարյա կոմունիզմա»-ի էջերում երևացին 1935-ից. Դա միանգամայն հաս-
կանալի է. գրականության ուրիշ ոչ մի ձյուղ այնքան նրբորեն, այնքան ման-
րամասնորեն չի ամփոփում, չի մարմնացնում իր մեջ ժողովրդի ապրումներն
ու իղձերը, որքան երգը:

Նախասովետական երգերի տպագրումը թերթում այնքան էլ մեծ դժվա-
րություն չէր ներկայացնում, որովհետև դրանց մեծ մասը ժամանակին հրա-
պարակված էր զանազան աղբյուրներում: Ի դեպ, դրանք բավական մանրա-
մասն ամփոփված են Խ. Փորքեջյանի ժողովածուում, որ լույս տեսավ վերջերս.
Ուստի մենք կանգ կառնենք գլխավորապես սովետական ժամանակաշրջանի
երգերի վրա:

Նոր երգերի հավաքմանը և մասսայականացմանը խմբագրությունն ի
սկզբանե մեծ նշանակություն էր դարձնում: Ուշագրավ է, օրինակ, Լենինավան
գյուղի հիմնադրմանը նվիրված երգը՝ տպագրված սրանից ավելի քան երեսուն
տարի առաջ: Դեռևս 1925 թ. Չալթրից առանձնանում են քսան չքավոր ընտա-
նիքներ, որպեսզի առանձին գյուղ կազմեն: Պետությունը նրանց հող է հատ-
կացնում, օգնում կյանքի բարվոք պայմաններ ստեղծելու: Նոր գյուղացին և
զարմանում է, և՛ հրճվում, բայց նա զգում է, որ իրեն պակասում է ուսումը:

Քսան խաղային մեզ էլանք,
էլլանք խաբառ կրվեցանք,
Դըվից վլաստը մեզի ֆոդ,
Ձառավ մեզմեն քալիկ փոդ:

Ունիւնք ամենքս մեզ-մեզ դուն,
Չունիւնք միայն վաւթադուն,
Գըխըրիւնք միւնք մեր վլաստեն,
Հանեն մեզի խավաւեն:

Նոր կենցաղը շատ շուտ հարադատացավ ժողովրդին և արտացոլվեց նրա
երգերում: Կարճ ժամանակվա ընթացքում «Ջարյա կոմունիզմա» թերթի էջե-
րում տեղ գտան «Խարիւր Խաղարը», «Հեքիաթ, հեքիաթը», «Գաթին ֆերման»,
«Ձենգինին դնգանը կանգադը» և ուրիշ երգեր: Դրանց մեջ վառ արտահայտու-
թյուն են գտել նորի և հնի պայքարը, մարդու հոգևոր վերափոխման դժվարին
ուղին: Կոլտնտեսական արդեն հասկացել է, որ ինքր նոր կյանքի ստեղծողն է
ու տեղը և չի կարող հանդուրժել այն թերությունները, որոնք նկատվում են
ինչպես տնտեսական, այնպես էլ կուլտուրական ասպարեզում:

Թերթի ելույթները լայն արձագանք գտան ընթերցողների շրջանում, շա-
տերն ինքնակամ իրենց ծառայությունը առաջարկեցին: Հայտնաբերվեցին տե-
ղական գուսանները՝ «գաղջիները»: Թոփտի գյուղում մինչև հիմա էլ տպրում
է գաղջի Մանիկը (Սողոմոնյան): Պատմում են, որ նա առաջինն է դիմավորել
1919 թ. կարմիրների մուտքը հայրենի գյուղ և գոչել. «Վա՛յ, հոգիներուն մեռ-
նիմ, բալշևիկներն ինձ»: Հետագայում նա գովերգել է քաղաքացիական պատե-

րադմի հերոսներին՝ նրան է պատկանում «Վառաշիլովը զորք հավաքեց» հանրահայա երգը՝ Ուշադրավ երգեր է հորինել նաև կին-գուսան, նորնախիջևանցի Մարիամ Աշոտֆյանը։

1941 թ. սկզբներին խմբադրությունը որոշեց ի մի բերել այն ամենը, ինչ արել էր անցած հինգ տարիների ընթացքում՝ ժողովրդական բանահյուսության լուսարանման ուղղությամբ։ Մայիսին և հունիսին թերթը ժողովված նյութերին տրամադրեց երկու էջ՝ մեկը նվիրված էր նախասովետական, իսկ մյուսը՝ սովետական շրջանի ստեղծագործություններին։

Լինթերցողն առաջին անգամ ծանոթացավ «Առլի սալդաթի երգի», «Հինադրին», «Հարտ հարսը», «Կիճակ» և այլ կենցաղային, սիրո, ծիսական երգերին։ Սովետական շրջանի բանավոր գրականության հավաքման գործում բրտնաշան աշխատանք կատարեցին Թեոդորոս Սահակյանը, Տրդատ Զիբիլյանը և տղերքիս հեղինակը։

Մեծ Հայրենականի տարիներին հարկագիր գաղար առավ այնպես դժվարությամբ սկսված աշխատանքը։ Միայն պատերազմի հաղթական ավարտից հետո հնարավոր եղավ շարունակել բանահյուսության նյութերի հավաքումն ու հրապարակումը։ Երգերը սկսվեցին տպագրվել թեմատիկ վերնագրերի տակ՝ սիրո, հարսանեկան, կենցաղային, մանկական, ռադմի և այլն։

Այդ աշխատանքներում մենք վերջին ժամանակներս ստանում ենք Հայաստանի դիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի անշահախնդիր օգնությունը։ Բանահավաքման գործին մեծ խթան հանդիսացավ խաչերես Փորբշկյանի «Նոր նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը» գիրքը, որը տպագրեց ՀՍՍՀ ԳԱ հրատարակչությունը։

Մինչև այժմ «Զարյա կոմունիզմ» թերթի էջերում տեղ էին գտնում գերադանցադես Դոնի հայերի երգերը։ Այսուհետև թերթը նպատակ ունի լայնորեն ներկայացնել մեր հեքիաթները, առակները, առածներն ու ասացվածքները, որոնց հավաքմանը մեծապես նպաստել են լենինականցի Հայկ Սողոմոնյանը և թոշակառու Մկրտիչ Լյուիսյանը։

Նմուշներ նոր նախիջևանի բանահյուսությունից.

ԽԱՐԻԲ ԽԱԶԱՐԸ

Սալթի ախկադ էր
Խարիբ Խազարը,
Քաշ կուկար անդեր
Վարի բազարը,
Հոս, հոն դրդաներ,
Օրը դանցուներ,
Քաղծած ու ձառավ
Խարիբ Խազարը։

Դարիներ անցան,
Դյանմը փոխվեցավ,

Աղեգ գրպանե,
Դուղե, գրնալե,

Զենդին մաշտոցը
Օրը մթնեցավ,
Խարիբ Խազարը
Օշթախներուն հեղ
Աշխաղանքի դեր—
Դիրական տառծավ։

Շինը Խազարը
Կոխոգ մղիլ է,
Կոխոգին մեշը
Նոր գյանմ կրղիլ է,
Աղով հին գյանմին
Հախեն էգիլ է։

1 Դրի է առել լրագրող Թեոդորոս Սահակյանը 1939 թ., Թոփտի գյուղում։ Նույն թվականին հրատարակվել է «Կոմունարում»։

ՀԵՔԻԱԹ, ՀԵՔԻԱԹ ԿԱՄ ԲԻԱՆԱՅԻ ԳԱՆԳԱՏԸ

Հեփիաթ, հեփիաթ բաբը,
Ի՞նչ էղավ առ աշխարհը,
Ձիդեսնված պաներ գրլան—
Գինմաշտիֆը ժողով գեշքան:

Բիանա իմ չորս հարսի,
Պայց մեֆադի խոսք չունիմ.
Հրավեր գա հարսերուս,
Բիդի էրթան գրոռնի:
Մեռֆս, ոտֆս տող ընգավ,
—Հաֆա, հարսը, ի՞նչ էղավ.

Ջառիգ բիդ լանֆ սաղ կեղով,
Ի՞նչ կործ ունիֆ տուֆ ժողով:

—Ասուր մարդին ուրը չէ՞.
Գինմաշտոցը դոնը չէ՞,
Էրմաշտոցը աղեթ է,
Գինմաշտոցը մեղեթ է...

Բաղ հուր լցին կլոխես,
Բուգ-փադ էղա դեղըս ես.
Սանդովեցան, հաֆվեցան,
Տեբի ժողով շրգրցան՝:

ԳԱԹԻՆ ՖԵՐՄԱՆ

Մեր կոլխոզի գաթին ֆերման
Ան մաշտիկն ին գենե հերվան,
Աս տարի ալ գուդին ալլախ,
Ան ալ սալթը չորս մադ խայմախ:

Խուզաս, Մարգոս հոն գրպանին,
Ային—օյին պաներ գանին,
Սերը գուդին հոն գանոնով,
Խուզաս—Մարգոս սուրփ անունով:

Սերը տեղին գառաֆ գանին,
Ջախու Ռաստով տապ գրդանին,
Գրծախձըխին, գուդին փողը
Եվ միդֆ գանին՝ ո՞վ է կողը:

Բալբան էրին՝ չորս կես գանին
Ու իրենց մեշ փայ ու բաժին
Եվ ֆըշերով գրբարդըկին.
«Սաղ էրինջը գորավ» գասին:

Էշտում գանե Մարգոս աղան՝
Գործեն բե խաբեր է դրդան.
«Գեռջա՞նը գերավ չենե,
Ջերե տիր ու վեր է գենե»:

Անգից եղֆն ալ գրգարմենան՝
Սա ինչի՞ մեր գաթին ֆերման
Թեֆենե—բաղայի աբուրով
Կրմնա սալթ դեբեղով՝:

СБОР ФОЛЬКЛОРНЫХ МАТЕРИАЛОВ В АРМЯНСКИХ СЕЛАХ
РОСТОВСКОЙ ОБЛАСТИ

Ш. А. ШАГИНЯН

Р е з ю м е

Собиранием и публикацией фольклора Нор-Нахичевани занимались в прошлом К. Патканян, Е. Шахазиз, Г. Тигранян и в наши дни М. Богданян, Х. Поркшеян, М. Чубарян, М. Люледжян, Г. Согомонян и другие.

Большую работу в области сбора и публикации образцов фольклора провела местная печать.

В приложении к статье представлено несколько образцов произведений фольклора и творчества ашугов Нор-Нахичевани.

2 Գրի է առնված լենինական գյուղում 1936 թ., ուսուցիչ Խաչատուր Տիրացույանից: Տպագրվել է նաև «Մուրճ-Մանգաղ» թերթի 1927 թ. մարտի 8-ի համարում:

3 Գրի է առնված Նիսվիթա գյուղում, ուսուցիչ Համադասալ Մկրտչյանից: Տպագրված է «Կոմունարում», 1940 թ.: